ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ « ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝«Սովորողների իրավունքների և ազատությունների,պատվի և արժանապատվության պաշտպանությունը »

Անցկացման վայր՝ Վարդենիս

Աշխատանքի ղեկավար՝ Հասմիկ Բեյբության

Ուսուցիչ՝ Եղիազարյան Արման

ՆԶՊ

Դպրոց՝ Փոքր Մասրիկի միջն դպրոց

Վարդենիս 2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Գրական ակնարկ----------5

Դասի պլան

Հետազոտական ընթացք ----------7

Փորձարարական հետազոտություն----------16

Եզրակացություն----------19

Գրականության ցանկ----------21

Դասի պլան----------22

Ներածություն

Պատերազմը որքան էլ որ լինի անխուսափելի և արդարացված,

միշտ էլ հանցագործություն է:

Միջազգային մարդասիրական իրավունքը միջազգային հանրային իրավունքի կարևոր ճյուղերից է: Այն բաղկացած է այնպիսի նորմերից , որոնք զինված ընդհարումների ժամանակ պաշտպանում են այն անձանց , ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին և սահմանափակում են պատերազմելու մեթոդների և միջոցների կիրառումը:

Ավելի ստույգ՝ «զինված ընդհարումների ժամանակ գործող միջազգային մարդասիրական իրավունք» ասելով ՝ ենթադրվում է միջազգային պայմանագրային կամ ավանդույթային այն նորմերը, որոնք հատուկ նախատեսված են անմիջականորեն միջազգային կամ ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումների հետևանքով առաջացող խնդիրները կարգավորելու համար: Մարդասիրական նկատառումներից ելնելով ՝ վերոհիշյալ նորմերը սահմանափակում են ընդհարման մեջ գտնվող կողմերի ՝ իրենց ընտրությամբ պատերազմելու մեթոդներ և միջոցներ կիրառելու ազատությանը և

պաշտպանում են ընդհարումից տուժած կամ նման վտանգի ենթակա մարդկանց գույքը:

Միջազգային բնույթի զինված ընդհարումը առնվազն երկու պետությունների զինված ուժերի բախումն է (**Հարկ է նշել, որ ազգային ազատագրական պատերազմները նույնպես դիտվում են որպես միջազգային բնույթի զինված ընդհարումներ**):

Ոչ միջազգային բնույթի զինված ընդհարումը որևե պետության տարածքում . վերջինիս կանոնավոր զինված ուժերի և կազմակերպված զինված խմբերի, կամ այդպիսի զինված խմբերի բախումն է :Որպեսզի բախումը համարվի ոչ միջազգային բնույթի զինված ընդհարում ` այն պետք է հասնի լարվածության որոշակի աստիճանի և շարունակվի որոշակի ժամանակահատվածի ընթացքում:Մարդկային իրավունքի սկզբունքը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. Ռազմական անհրաժեշտությունը և հասարակական կարգ ու կանոնի պապաշտպանումը մշտապես հարիր են մարդու նկատմամբ հարգանքին: Մարդկության և անհրաժեշտության միջև մշտապես կա հակասություն օրինակ՝ մեկը պետության շահերից ելնելով իր պարտքն է համարում պահպանել հասարակական կարգ ու կանոնը , մինչդեռ մյուսը ենթարկվում է ավելի կարևոր չգրված օրենքի, որը նախապատվությունը տալիս է անհատի շահերին: Վերը նշված սկզբունքից ծագում է **մարդասիրական իրավունքի սկզբունքը (կամ զինված ընդհարումների սկզբունքը):** Պատերազմը վերջին ծայրահեղ միջոցն է, որով մի պետություն իր կամքն է թելադրում մեկ այլ պետության: Այդ նպատակին հասնելու համար պետությունը դիմում է անհրաժեշտ ուժի կիրառման: Ուժը իր հետևից միշտ թողնում է տառապանք և ավերածություններ: Իր նպատակին հասնելու ` այն է թշնամուն հաղթելու համար, ընդհարման մեջ մտած պետությունը փորձում է իր համար նվազագույն կորուստներով ոչնչացնել կամ թուլացնել թշնամու ռազմական հզորությունը, որը բաղկացած է երկու տարից **մարդկային պաշարներ և նյութական արժեք:**

Վերը նշված սկզբունքից բխում է **ժնևյան իրավունքի սկզբունքը,** որը կարելի է ձևակերպել այսպես. Այն անձիք որոնք ուղղակիորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին ունեն հարգանքի, պաժտպանության և մարդկային վերաբերմունք ունենալու իրավունք: Հաստատված է կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից 2000թ.

Միջազգային մարդասիրական իրավունքի կարևորագույն նորմերից է քաղաքացիական բնակչության անվտանգության ապահովվումը պատերազմական գործողությունների ժամանակ: Դարերի ընթացքում փոխվել է պատերազմ վարելու մեթոդներն ու միջոցները: Այդ ընթացքում զարգացել և կատարելագործվել է զենքերի տեսակները: Զինատեսակներ որոնց օգտագործելուց արդեն խնդիր է դառնում մարդկության գոյատևումը (ատոմային ռումբ, միջուկային ռումբ, ջրածնային ռումբ և այլն):

Գրական ակնարկ

Միջազգային մարդասիրական իրավունքը որպես գրավոր իրավունք , սկիզբ է առնում 1864թ. օգոստոսի 22-ից երբ ստորագրվեց Ժնևի առաջին պայմանագիրը «գործող բանակներում վիրավոր զինվորների վիճակի բարելավման մասին»:Միջազգային մարդասիրական իրավունքը միջազգային հանրային իրավունքի կարևոր ճյուղերից է: Այն բաղկացած է այնպիսի նորմերից, որոնք զինված ընդհարումների ժամանակ պաշտպանում են այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցելուց ռազմական գործողություններին և սահմանափակում են պատերազմելու մեթոդների և միջոցների կիրառումը:

Որոնք են միջազգային մարդասիրական իրավունքի առավել կարևոր նորմերը

Ընդհարման մեջ գտնվող կողմերը պարտավոր են մշտապես տարբերակել քաղաքացիական բնակչությունը մարտիկներից, որպեսզի խնայեն քաղաքացիական բնակչությանը և քաղաքացիական օբյեկտները: Արգելվում է հարձակվել բնակչության և առանձին քաղաքացիական անձանց վրա: Հարձակումներ կարող են կատարվել բացառապես ռազմական օբյեկտների վրա: Այն անձինք, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցելուց ռազմական գործողություններին՝ կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունք ունեն: Այս անձինք պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն պաշտպանությունից և արժանանան մարդասիրական վերաբերմունքի՝ առանց որևէ խտրականության: Արգելվում է սպանել կամ վիրավորել հակառակորդին, եթե վերջինս հանձնվում է կամ այլևս չի կարող մասնակցել ռազմական գործողություններին:
Ոչ ընդհարման մեջ գտնվող կողմերը, և ոչ էլ նրանց զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք, չունեն պատերազմելու մեթոդները և միջոցներն ընտրելու անսահմանափակ իրավունք: Արգելվում է կիրառել այնպիսի զենք կամ պատերազմելու մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ տառապանքներ պատճառել:
Ընդհարման մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ են գտնվում վիրավորները և հիվանդները, պետք է հավաքի նրանց և խնամք ապահովի:

Բուժանձնակազմը և բժշկական կազմավորումները, փոխադրամիջոցները և սարքավորումները պաշտպանության տակ են առնվում: Սպիտակ ֆոնի վրա կարմիր խաչը կամ կարմիր մահիկը տարբերանշան է, որը ցույց է տալիս, որ տվյալ անձինք կամ օբյեկտները պետք է արժանանան հարգանքի և պաշտպանության:

Գերի ընկած մարտիկները և այն քաղաքացիական անձինք, որոնք գտնվում են հակառակորդի իշխանութայն տակ՝ իրենց կյանքի, արժանապատվության, անձնական իրավունքների և քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների բռնադատման չեն ենթարկվելու: Նրանք պետք է պաշտպանվեն բռնության ամեն տեսակի ակտերից կամ ռեպրեսիաներից (փոխճնշման միջոցների կիրառումից): Գերիներն իրենց ընտանիքների հետ նամակագրության և օգնություն ստանալու իրավունք ունեն: Նրանք պետք է օգտվեն հիմնական դատական երաշխիքներից:

Հետազոտական ընթացք

Միջազգային մարդասիրական իրավունքի ընդհանուր դրույթները

Ռազմագիտության մեջ միջազգային մարդասիրական իրավունքը ընդունված է անվանել զինված ընդհարումների իրավունք, որը միջազգային մարդասիրական իրավունքի բաղկացուցիչ մասերից մեկն է:

Միջազգային մարդասիրական իրավունքը կանոնակարգում է զինված ընդհարումները, որի նպատակն է առավելագույնս նվազեցնել պատերազմի ողբերգական հետևանքներն ու պաշտպանել անհատի արժանապատվությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը սկսում են գործել զինված ընդհարման սկսվելու պահից՝ անկախ սկսվելու պատճառներից և հավասարաչափ կիրառվում են պատերազմող բոլոր կողմերի նկատմամբ: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կիրառումը դադարեցվում է (բացառությամբ ռազմագերիների և մշակութային արժեքների պահպանության) մարտական գործողությունների ավարտի հետ միաժամանակ:

Միջազգային մարդասիրական իրավունքը բաժանվում է երկու ճյուղի՝

Երկու հոսքերն իրենց անունները ստացել են բազմաթիվ միջազգային կոնֆերանսներից, որոնք կազմել են պատերազմի և հակամարտության հետ կապված բազմաթիվ պայմանագրեր, մասնավորապես, Հաագայի 1899 ու 1907 թվականների կոնվենցիաները և Ժնևի կոնվենցիաները, որոնցից առաջինը կազմվել է 1864 թվականին (1906 և 1929թթ.):

Վերոնշյալ կոնվենցիաների մշակած սկզբունքների հիման վրա Ժնևյան 1949թ. կոնվենցիան ամփոփեց հիմնական դրույթները, որոնք կանոնակարգում էին՝



Հետագայում ևս՝ Հաագայի և Ժնևի 1954, 1977, 2005թթ. Կոնվենցիաները պատերազմի օրենքների, քաղաքացիական բնակչության պաշտպանության, զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության հարցերին, որոնք կանոնակարգում են՝

- մարտական գործողությունների վարման որոշ սահմանափակումներ,
- վիրավորների և գերիների կարգավիճակը,
- քաղաքացիական բնակչության իրավունքների հարգումը,
- բժշկական և հոգևոր անձնակազմի իրավունքների ճանաչումը,
- մշակութային արժեքների պաշտպանությունն ու պահպանումը,
- պատերազմող պետությունների և առանձին անձանց պատասխանատվությունը ՄՄԻ-ի նորմերի խախտման դեպքում:

•

1949 և 1977թ.մշակելով Ժնևյան կոնվենցիաները, մարդիկ չէին կարող պատկերացնել թե ինչպիսի նոր պատերազմների և մարդկության հանդեպ ինչպիսի նոր վայրագությունների պիտի ականատես լինեն: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը և դրույթները որոնք մշակվել և միացյալ ազգերի կազմակերպության կողմից ընդունվել են շատ դեպքերում չեն իրագործվում:Փորձենք գտնել պատճառները:

Ներկայումս Միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտում ստեղծված է միջազգային իրավական փաստաթղթերի բավականին մեծ համալիր, և պատերազմի օրենքներն ու սովորությունները ամփոփված են դոկտրինալ մակարդակով: Սակայն իրավաբանական նորմերի ցանկացած համակարգ, անկախ դրա մշակվածության աստիճանից, չի կարող գոյատևել , եթե այն չունի ազդեցության հասարակական կյանքի վրա:Իրավունքը ոչինչ է, եթե դրա դրույթները չեն իրացվում մարդկանց գործնեության մեջ և հասարակական հարաբերություններում:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով կարգավորվում են պատերազմի ժամանակ գործող վարքականոնները կամ պատերազմի իրավունքը: Սա միջազգային իրավունքի այն ճյուղն է, որը ձգտում է սահմանափակել զինված ընդհարման ազդեցությունը՝ պաշտպանելով անձանց, ովքեր չեն մասնակցում ռազմական գործողություններին և սահմանափակելով ու կարգավորելով կոմբատանտների համար հասանելի պատերազմի միջոցներն ու մեթոդները: Միջազգային մարդասիրական իրավունքը ոգեշնչված է մարդասիրության նկատառումներով և մարդկային տառապանքի մեղմացմամբ: Այն ներառում է մի շարք կանոններ՝ ստեղծված պայմանագրի կամ սովորույթի հիման վրա, որոնց նպատակն է պաշտպանել անձանց և գույքը, օբյեկտները, որոնք վնասվում են կամ կարող են վնասվել զինված ընդհարման հետևանքով, և սահմանափակում է ընդհարման կողմերի իրավունքը, այն է՝ օգտագործել պատերազմի մեթոդներ ու միջոցներ ըստ իրենց ընտրության :

Միջազգային մարդասիրական իրավունքը ներառում է 1949թ. Ժնևյան կոնվենցիաները, ինչպես նաև կից արձանագրությունները, նախադեպային իրավունքը և միջազգային սովորութային իրավունքը : Միևնույն ժամանակ սահմանում է հակամարտող ազգերի, չեզոք ազգերի և պատերազմի մեջ գտնվեղ անհատների վարքագիծն ու պատասխանատվությունը՝ միմյանց և պաշտպանված անձան նկատմամբ՝ հիմնականում ոչ կոմբատանտների: Այն մշակվել է մարդասիրական մտահոգությունների և ռազմական անհրաժեշտության միջև հավասարակշռությունը պահպանելու համար և ենթարկել է պատերազմը օրենքի գերակայությանը՝ սահմանափակելով դրա կործանարար ազդեցությունը և փորձելով մեղմացնել մարդկային տառապանքը:Ի տարբերություն այլ ազգերի, հայոց պատմության մեջ պարտված թշնամու հանդեպ եղել են գթասրտության և մեծահոգության բազում դերքեր: Հիշենք հայոց էպոսի հերոս Սասունցի Դավթին, որը Մսրա Մելիքին հաղթելուց հետո դիմում է կոտրվելու սարսափից քարացած Մսրա զորքին՝ հանգստացնելով նրանց, որ չվախենան քանզի զուրկ ու խավար, քաղցած ու մերկ ռանչպար մարդիկ են: Եվ խորհուրդ է տալիս՝

Դարձեք եկած ճանապարհով

Ձեր հայրենի հողը Մսրա:

Հիշենք ինչպես Մուշեղ Մամիկոնյանի վեհանձն արարքը , երբ Ձիրավի ճակատամարտում պարտված պարսկական կողմին է վերադարձնում պարսից արքայի գերեվարված կանանց:

Հիշենք ամենաթարմ դեպքերից մեկը. Արցախյան ազատամարտի ժամանակ, երբ հայկական զինվորական կազմավորումները գրավում էին Խոջալուն և Շուշին, նրանք միջանցք թողեցին խաղաղ բնակչության համար, չնայած մինչ այդ ազերիները խոշտանգել ու ողջ- ողջ այրել էին Սումգայիթի հայ բնակչությանը:

Գթասրտությունն ու կարեկցանկը մարդ արարածի էության անբաժանելի մասն են նրա գոյության հենց սկզբից: Ուստի պատերազմների արհավիրքները մեղմելու, մարդու իրավունքների կանոններ մշակելու փորձեր եղել են դեռևս 4 հազարամյակ առաջ: Մշակվել են բանագնացների անձեռնմխելիության, հրադադարի, հաշտության պայմանագրի, պատերազմող կողմերի ստանձնած պարտավորությունների պարզագույն կանոններ:

Այս թեման ուսումնասիրելով մեր աշակերտների մոտ հարց է ծագում, իսկ արդյոք մեր թշնամիները նույն կերպ վարվել են մեզ հետ: Լավ իմանալով մեր պատմությունն ու մեր թշնամուն մենք նմանատիպ դրվագներ չենք գտնի: Քանի որ ունեցել ենք մեծ եղեռն,

Սումգայիթի և Բաքվի ջարդեր, Արցախյան ազատամարտից դրվագներ և այլն: 2016 թ. քառօրյայի և 2020թ պատերազմները ցույց տվեցին , որ թշնամին մնացել է նույնը և ավելի դաժան վերաբերմունք է ցուցաբերում խաղաղ բնակչության և ռազմագերիների հանդեպ: Որոնք միջազգային բոլոր նորմերով պաշտպանված են նման գործողություններից: Մենք գիտենք թե ինչպիսի արգելված զենք և զինամթերք են օգտագործել քաղաքների, գյուղերի և խաղաղ բնակչության վրա գրոհելիս (կասետային ռումբեր, ֆոսֆորային ռումբեր, տարբեր հրթիռային համակարգեր): Հարց է ծագում ինչո՞ւ մինչ օրս որևիցե միջազգային կազմակերպություն չի անդրադարձել այս ամենին, ինչո՞ւ մարդասիրական ոչ մի կազմակերպություն չի դատապարտել Ադրբեջանի գործողությունները, չնայած այն բանի որ Ադրբեջանը ստորագրել է միջազգային մարդասիրական իրավունքին վերաբերող շատ փաստաթղթեր:

Հարցերով և մտքերի փոխանակումով փորձենք պարզել և վերլուծել սա: Աշխարհը դարձել է միաբևեռ: Աշխարհում առաջնահերթությունը միշտ եղել ու մնում է ուժը: Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը դարձել են գործիք կոնկրետ երկրների համար: Այս նորմերը օգտագործվում են կոնկրետ առիթների և դեպքերի համար: Ադրբեջանը լինելով հարուստ էներկագիրների երկիր, որը մեր օրերում առաջնահերթություն է աշխարհում, ունի հզոր հովանավոր երկրներ (Թուրքիա, Մեծ Բրիտանիա, Պակիստան, ԱՄՆ, Իսրայել) որոնք մեծ ազդեցություն ունեն միջազգային կառույցների վրա: Սրանից ելնելով միջազգային կառույցները շատ դեպքերում պատերազմի շատ դրվագներ անտեսում են: Առաջնահերթությունը տրվում է կոնկրետ երկրների անձնական շահերին:

Չնայած միջազգային և պետական մակարդակով իրավական բազայի զգալի կատարելագործմանը, այնուհանդերձ վերջին շրջանում աշխարհի տարբեր մասերում ծագած միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված ընդհարումների ժամանակ արձանագրվում են միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների չափազանց մեծ ծավալների խախտումներ, որոնք հաճախ մնում են անպատիժ, ինչն ավելի է խստացնում միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտում պետությունների ստանձնած պարտականությունների կատարման անհրաժեշտությունը: Աֆղանիստան, Լիբիա, Իրաք, Սիրիա, Ադրբեջան):

Խաղաղ բնակչության պաշտպանությունը ռազմական գործողություններից

Միջազգային իրավունքին շատ երկար ժամանակ պետք եղավ մարտիկների և ռազմական գործողություններին չմասնակցող անձանց տարանջատման սկզբունքի սահմանման համար: Ժողովրդի՝ պատերազմին չներգրավվելու միտքը առաջին անգամ ծնվել է 16-րդ դարում: Սակայն այն շեշտակի զարգացում ապրեց միայն 20-րդ դարի սկզբին: 1974-1977 թթ. Դիվանագիտական համաժողովի ընթացքում այս բնագավառում ընդունվեցին մի շարք դրույթներ, որոնցից նշենք առավել սպասված մի քանիսը: Դրանցից են՝ քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների սահմանումը և այն, որ, ի հակադրություն զինվորականների և ռազմական օբյեկտների, դրանք չեն կարող հարձակման ենթարկվել: Հատուկ նշվում է քաղաքացիական բնակչության անձեռնմխելիությունը՝ ընդգծելով, որ վերջինս չի կարող հարձակման ենթարկվել, և, որ արգելվում են «ահաբեկող ռմբակոծությունները», ինչպես նաև՝ ոչ ընտրողական կամ փոխճնշման նպատակով ռմբակոծությունները: Կա հատուկ հոդված՝ նվիրված պատերազմի ժամանակ պատմական հուշարձանների պաշտպանությանը, պաշտամունքի վայրերի ու արվեստի ստեղծագործությունների պաշտպանությանը: Որպես պատերազմելու մեթոդ՝ արգելվում է բնակչությանը սովի մատնելը: Տրամաբանորեն՝ արգելվում է նաև գյուղատնտեսական ցանքատարածությունների, անասունների, խմելու ջրի ամբարների և քաղաքացիական բնակչության կենսագործունեության համար անհրաժեշտ այլ օբյեկտնորի վրա հարձակումը: Սահմանվում են նախազգուշական միջոցներ, որ անհրաժեշտ է ձեռք առնել յուրաքանչյուր հարձակումից առաջ, մասնավորապես, ռազմական օբյեկտների ճանաչումը՝ նախքան դրանց վրա հարձակվելը, չպաշտպանված վայրերի և ապառազմականացված գոտիների պաշտպանությունը, որոնց կարգավիճակը պետք է սահմանվի կողմերի միջև համաձայնության միջոցով: Մեծ նվաճում է նաև քաղաքացիական բնակչության հանդեպ փոխճնշումների իսպառ արգելքը՝ չնայած այն թեժ քննարկումներին, որ ծավալվում են այս հարցի շուրջ: Կա կարծիք, որ այսպես կարելի է շատ հեռուն գնալ և լուրջ խնդիրներ ստեղծել որև երկրի համար, որը պաշտպանվում է միջոցների մեջ խտրականություն չդնող կամ արձանագրությունն այլ կերպ խախտող թշնամուց: Առաջարկվում է նաև այն տարբերակը, որ փոխճնշումների հնարավորություն, այնուամենայնիվ, տրվի, պարզապես ենթարկվի խիստ կանոնակարգման:

Դեռ շատ վաղուց փորձեր արվել են արգելելու զենքի որոշ տեսակներ, ինչպես, օրինակ, թույնը, թունավորված կամ բոցավառվող նետերը, ատամնավոր զենքեր և այլն:

Արդարացի պատերազմի հասկացության հետ միասին հռոմեացիները շրջանառության մեջ դրեցին նաև արգելված զենքերի գաղափարը, և նրանք «կեղտոտ պատերազմ» /լատ. Bellum nefarium/ էին անվանում «կույր» պատերազմը, որը ոչ օրենք էր հաշվի առնում, ոչ էլ խնայում կանանց, ծերերին կամ երեխաներին: Հաագայի 1907 թ. կոնվենցիայի Առաջին Արձանագրության 35 հոդվածում ասվում է, որ «Ցանկացած զինված ընդհարման մեջ գտնվող կողմերի՝ պատերազմելու մեթոդների և միջոցների ընտրության իրավունքն անսահմանափակ չէ……., և արգելվում է կիրառել այնպիսի զենքեր, նյութեր, ինչպես նաև պատերազմելու այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ տառապաքներ պատճառել»: Մի շարք զինատեսակներ, ինչպիսիք են, օրինակ, պայթուցիկ արկերը, թույնը, խեղդող գազերը, արգելվեցին 1868 թվականի Սանկտ-Պետերբուրգի և Հաագայի 1899 և 1907 թթ. համաժողովներում: Նույն համաժողովների ընթացքում ձևակերպվեցին նաև մի շարք կարևոր ընդհանուր սկզբունքներ, որոնք առ այսօր պահպանում են իրենց այժմեականությունը: Օրինակ,այն, որ արգելվում է ավելորդ վնաս հասցնող կամ պատերազմի նպատակներից չբխող զենքերի օգտագործումը: 1925 թվականի Ժնևյան «Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ գազերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին» արձանագրությամբ մի սկզբունք, որով արգելվում է պատերազմի ժամանակ խեղդող, թունավոր կամ այլ նման գազերի օգտագործումը: Սա շատ կարևոր հաջողություն է մարդասիրական իրավունքի բնագավառում: Նույն արձանագրությամբ արգելվեց նաև այդ ժամանակ դեռևս գոյություն չունեցող՝ մանրէաբանական զենքը: Քիմիական և մանրէաբանական պատերազմն արգելված է Ժնևյան արձանագրությամբ, ինչպես նաև ընդհանուր սկզբունքներով և միջազգայինիրավական սովորույթներով: Պատերազմելու այս երկու բարբարոսական ձևերի դատապարտումն, այսպիսով, համընդհանուր բնույթ է կրում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ավելի կործանարար զենքի՝ ատոմային ռումբի ի հայտ գալը նոր խնդիրներ առաջ բերեց: Միջուկային էներգիայի՝ ռազմական նպատակներով օգտագործման հարցը մարդասիրական իրավունքի կոնվենցիաների մեջ տեղ չի գտել: Դրա պարզ պատճառն այն է, որ վերջիններս ավելի վաղ են ստեղծվել: Սակայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան իր 1996 թվականի բանաձևով խստորեն դատապարտել է միջուկային զենքի օգտագործումը՝ դա համարելով ՄԱԿ-ի Կանոնադրության և մարդասիրության սկզբունքների ոտնահարում: Այս հարցին առնչվող մի դեպք կա դատական պրակտիկայում: Դա բոլորիս հայտնի՝ Հիրոսիմայի և

Նագասակիի ռմբակոծության դեպքի մասին է. Շիմոդայի գործի կապակցությամբ Ճապոնիայի դատարաններից մեկը վճիռ է կայացրել, ըստ որի՝ ռմբակոծությունը ճանաչվել է անօրինական: Դատավճռի հիմնավորումների մեջ նշվում է, որ զենքի նոր լինելու համգամանքը բավական չէ այն օրինական դարձնելու համար: Նշվում է նաև, որ Հաագայի իրավունքի նորմերի նմանության սկզբունքով տարածվում են նաև օդային ռմբակոծությունների վրա և, որ վերոհիշյալ քաղաքները պաշտպանված չէին և հետևաբար՝ ռազմական թիրախ չէին , ու այդ ռմբակոծությունների հետևանքներն ավելի սարսափելի են, քան քիմիական և մանրէաբանական զենքինը: Բացի վերը նշված զենքերից, կան նաև «սովորական» համարվող այլ զենքեր, որոնց կիրառումը նույնպես արգելված է: Դրանց թվում են, օրինակ, հրկիզող զենքերը, գնդիկավոր ռումբերը, սկզբնական մեծ արագությամբ արկերը և այլն: 1799-1980 թթ. ՄԱԿ-ի հովանու նորքո տեղի ունեցած դիվանագիտական համաժողովի արդյունքում ընդունվեց «Չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական գործողություն ունեցող սովորական զենքի որոշ տեսակների կիրառումն արգելելու կամ սահմանափակելու մասին» կոնվենցիան: Այն պարունակում է ընթացակարգի կանոններ և իրավունքի ընդհանուր սկզբունքների հակիրճ նկարագրություն:Այս հարցին առնչվող մի դեպք կա դատական պրակտիկայում: Դա բոլորիս հայտնի՝ Հիրոսիմայի և Նագասակիի ռմբակոծության դեպքի մասին է. Շիմոդայի գործի կապակցությամբ Ճապոնիայի դատարաններից մեկը վճիռ է կայացրել, ըստ որի՝ ռմբակոծությունը ճանաչվել է անօրինական: Դատավճռի հիմնավորումների մեջ նշվում է, որ զենքի նոր լինելու համգամանքը բավական չէ այն օրինական դարձնելու համար: Նշվում է նաև, որ Հաագայի իրավունքի նորմերի նմանության սկզբունքով տարածվում են նաև օդային ռմբակոծությունների վրա և, որ վերոհիշյալ քաղաքները պաշտպանված չէին և հետևաբար՝ ռազմական թիրախ չէին , ու այդ ռմբակոծությունների հետևանքներն ավելի սարսափելի են, քան քիմիական և մանրէաբանական զենքինը: Բացի վերը նշված զենքերից, կան նաև «սովորական» համարվող այլ զենքեր, որոնց կիրառումը նույնպես արգելված է: Դրանց թվում են, օրինակ, հրկիզող զենքերը, գնդիկավոր ռումբերը, սկզբնական մեծ արագությամբ արկերը և այլն: 1799-1980 թթ. ՄԱԿ-ի հովանու նորքո տեղի ունեցած դիվանագիտական համաժողովի արդյունքում ընդունվեց «Չափազանց մեծ վնասվածքներ պատճառող կամ ոչ ընտրողական գործողություն ունեցող սովորական զենքի որոշ տեսակների կիրառումն արգելելու կամ սահմանափակելու

մասին» կոնվենցիան: Այն պարունակում է ընթացակարգի կանոններ և իրավունքի ընդհանուր սկզբունքների հակիրճ նկարագրություն:

Փորձարարական հետազոտություն

Պետությունների պատասխանատվությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար

Մեր ուսումնասիրությունների ընթացքում մենք խոսեցինք միջազգային մարդասիրական իրավունքի ապահովման համար անհրաժեշտ իրավական հիմնական բազայի մասին, մասնավորապես՝ Ժնևի ու Հաագայի կոնվենցիաների և դրանց կից արձանագրությունների մասին: Սրանց բացակայության դեպքում մարդկության

պատմության մեջ ամոթալի օրերը շատ ավելի շատ կլինեին: Սակայն պարզ է նաև,որ այս նորմերը հռչակագրային բնույթ կունենային, եթե դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ չսահմանվեին: Ուստի այժմ կխոսենք միջազգային իրավական պատասխանատվության մասին, մասնավորապես՝ պատասխանատվության մասին, որը վրա է հասնում միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտելիս: Առհասարակ միջազգային իրավական պատասխանատվություն ասելով հասկանում ենք միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից միջազգային իրավունքի նորմերը և իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում նրա համարառաջացող անբարենպաստ իրավաբանական հետևանքները: Սահմանման առումով նույնը կարելի է ասել և միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար վրա հասնող պատասխանատվության մասին, այն տարբերությամբ, որ այդ անբարենպաստ հեևանքները վրա են հասնում միջազգային մարադասիրական իրավունքի խախտման պարագայում: Միջազգային մարդասիրական իրավունքի չպահպանման համար պատասխանատվություն է նախատեսված ինչպե՛ս ազգային, այնպե՛ս էլ միջազգային մակարդակով:

Զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների խախտումը հանգեցնում է հստակ պատասխանատվության, որը դրսևորվում է կոլեկտիվ և անհատական պատասխանատվության ձևերով: Նշված տարբերակումը ոչ միանաշանակ կարող է ընկալվել, մասնավորապես «կոլեկտիվ պատասխանատվություն» եզրույթի առումով, քանի որ այն ընկալվում է որպես համակարգային պատասխանատվություն: Այսինքն միջազգային իրավունքի տեսանկյունից ավելի հաճախ ընկալվում է որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտների՝ պետությունների պատասխանատվություն: Սակայն, մինչև պատասխանատվության այս տեսակներին անդրադառնալը, նախ միջազգային իրավական պատասխանատվության հստակեցման համար անդրադառնանք միջազգային իրավախախտման հատկանիշներին, որը բնութագրվում է արարքի հակահիրավականության և վնասի բնորոշիչներով: Իրավախախտման անբաժանելի կառուցվածքային տարր է պատճառական կապն արարքի և առաջացած հետևանքների՝ վնասի միջև: Պետության վարքագծի հակահիրավականությունը դրսևորվում է իր պարտավորությունների խախտմամբ՝ գործողության կամ անգործության տեսքով: Հակահիրավականությունը միջազգային իրավունքում հասկացվում է որպես հակասություն իրավական նորմի (պարտավորության) և պետության վարքագծի միջև: Պետության կողմից միջազգային պարտավորության

խախտումն առկա է այն դեպքում, երբ այդ պետության արարքը չի համապատասխանում նշված պարտավորությամբ իրեն ներկայացվող պահանջներին: Ցանկացած հակահիրավական վարքագիծ վնաս է պատճառում պետությունների՝ միջազգային իրավունքով պաշտպանվող օրինական շահերին կամ ամբողջ միջազգային հանրությանը: Վնաս կրած պետությունը դառնում է տուժող, ինչը հիմք է տալիս միջազգային պատասխանատվության հարց բարձրացնելու համար: Վնասը կարող է լինել նյութական (տարածքային, նյութական կորուստներ, ֆինանսական վնասներ, կորցված օգուտ) և ոչ գույքային (պետության իրավունքների, պատվի, արժանապատվության ոտնահարում և այլն): Միջազգային հանցագործություն չկազմող արարքը հասարակ միջազգային իրավախախտում է «: Միջազգային դելիկտներն առանձին պետությանը կամ միջազգային իրավունքի սուբյեկտների սահմանափակ խմբին վնաս պատճառող հակահիրավական գործողություններն են: Այդ դեպքում պատասխանատվության հարաբերություններն առաջանում են իրավախախտ պետության և անմիջապես տուժած պետության միջև, իսկ եթե իրավախախտումն աննշան է և չի առնչվում պետությունների և ազգերի գոյության հիմքերին, չի պատկանում առաջին խմբի հանցագործությունների թվին: Այդպիսի իրավախախտումներ են, օրինակ, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ հակահիրավական գործունեությունը չխափանող պետական մարմինների թողտվությունը (անգործությունը), առևտրային պարտավորությունների խախտումը և այլն: Միջազգային իրավունքի որոշ խախտումներ կարելի է դասակարգել որպես պետության և առանձին անձանց կողմից միջազգային իրավունքի խախտում, ինչը ենթադրում հավելյալ իրավական պատասխանատվություն: Ի համեմատություն միջազգային իրավունքի «հասարակ» խախտումների, մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի դեմ հանցագործությունները կարող են պատժվել ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային մակարդակով: Այսպես ցեղասպանությունը, մարդկության դեմ հանցագործությունը և զինվորական հանցագործությունները կարող են միջազգային տրիբունալի հանգեցնել: Պետությունը միջազգային իրավունքի տեսանկյունից ռազմական հակամարտությունների ժամանակ պատասխանատվություն է կրում մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար, եթե հետևյալ խախտումներն է թույլ տվել. – խախտումները կատարվել են պետության մարմինների, ներառյալ զինված ուժերի կողմից, – խախտումները

կատարվել են այն անձանց կամ կառույցների կողմից, որոնք պետական իշխանության տարրերի գործառույթներ են իրականացնում, – խախտումները կատարվել են պետության ցուցմամբ գործող կամ պետության վերահսկողության տակ գտնվող անձանց կամ խմբի կողմից, – խախտումները կատարվել են մասնավոր անձանց ու խմբերի կողմից, որոնք պետությունը ճանաչում և ընդունում է որպես սեփական արարք: Պետությունը կարող է նաև պատասխանատվության ենթարկվել բավարար ջանքեր չգործադրելու համար, եթե այն չի կանխարգելել և չի պատժել մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, որոնք արվել են մասնավոր անձանց կողմից: Համաձայն միջազգային և տարածաշրջանային դատական պրակտիկայի՝ պետության կողմից մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները պետք է հանգեցնեն պետության կողմից հատուցման: Նման գործողություններից կարող են լինել զոհերին և նրանց ընտանիքներին փոխհատուցումը, չկրկնվելու երաշխիքների տրամադրումը և այլն:

Հ.Հ.սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մաս են, և եթե վերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:(Հ.Հ. սահմանադրության 6-րդ հոդված):

Հայաստանի հանրապետությունը մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային պայմանագրերի մեծ մասին: Բայց խաղաղություն և անվտանգություն ապահովվելու համար մեզ պետք է ունենալ հզոր պետություն և հզոր բանակ:

Հայաստանում ակտիվ գործող միջազգային կազմակերպություններից է« Կարմիր խաչի ընկերությունը»

1863 թվականին Շվեյցարիայում ստեղծվել է «Հիվանդ ու վիրավոր մարտիկների խնամատարության կոմիտե»: Հաջորդ տարուց սկսած կազմակերպվել են «Կարմիր խաչի» ազգային ընկերություններ, հետագայում հիմնադրվել է միջազգային «Կարմիր խաչ», ստեղծվել նրա միջազգային կոմիտե: 1965-ի կանոնադրությամբ միջազգային «Կարմիր խաչի» գերագույն օրգանը կոնֆերանսն է, որը գումարվում է չորս տարին մեկ, իսկ կոնֆերանսների միջև ընկած ժամանակաշրջանում՝ մշտական հանձնաժողովը: Հայաստանի «Կարմիր խաչի» ընկերությունը հիմնադրվել է 1921թ.: **Կարմիր խաչ** (պաշտոնապես՝ **Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային շարժում**),

տարբեր երկրներում ՝ կամավոր ընկերություններ, որոնք պատերազմի ժամանակ կազմակերպում են օգնություն ռազմագերիներին, վիրավոր և հիվանդ ռազմիկներին, խաղաղ պայմաններում՝ բնական աղետներից տուժածներին և վարակիչ հիվանդություններով տառապողներին:

Եզրակացություն

Հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրելով միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուր կոնվենցիաները, դրանց կից արձանագրությունները, փորձեցինք մեր ուսումնասիրության շրջանակում ներառված խնդիրներին լուծումներ տալով՝ հասնել սույն աշխատանքի նպատակին: Այսպիսով, պարզ դարձավ, որ միջազգային մարդասիրական իրավունքի հիմքը կազմող ունիվերսալ միջազգային կոնվենցիաները, մասնավորապես 1949թ. Ժնևյան կոնվենցիաները և դրանց կից արձանագրությունները, միջազգային իրավական պարտավորություններ են սահմանում բոլոր պետությունների համար՝ անկախ կոնկրետ պայմանագրերը վավերացրած լինելու հանգամանքից: Դա պայմանավորված է վերոհիշյալ պայմանագրերի՝ ընդհանուր միջազգային սովորութային իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսանալու փաստով, կոնվենցիաների՝ համամարդկային բարոյական նորմերի խտացված ներկայացվածությամբ և դրանց բարձր բարոյական ուժով: Մարդկությունը ունենալով Նյուրնբերգյան դատավարություն չէր էլ կարող պատկերացնել , որ նմանատիպ դատավարություններ, որպես այդպիսին, շատ ենք ունենալու: Բայց Միջազգային Մարդասիրության Իրավունքի նորմերը ուսումնասիրելիս մեր հետազոտական աշխատանքից պարզ դարձավ, որ Միջազգային Մարդասիրական իրավունքի նորմերը անտեսվում են կամ ընդհանրապես չեն կատարվում, քանի որ մարդկությունը շարժվում է «Ուժն է ծնում իրավունք» սկզբունքով:

Գրականություն

1.Հ.Պ.Գասպեր «Միջազգային մարդասիրական իրավունք» 1999թ.էջ 71

2.Ժ. Պիկե « Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները»2000 թ Կ.Խ.Մ.Կ. էջ62

3.1949 թ. օգոստոսի 12-ի ժնևի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները:Կ.Խ.Մ.Կ. Երևան 2009,413էջ 327

4.Վ.Քոչարյան «Միջազգային մարդասիրական իրավունք»Երևան 2002 էջ 130

5. http://sbiblio.com/biblio/archive/rehsetov_borba/04.aspx, վերցված է 19.01.2018թ.

Քոչարյան Վ. Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ – Եր.: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, էջ 136

6. http://rudocs.exdat.com/docs/index-448087.html?page=6 վերցված է 29.01.2018թ.

7.http://www.slovopedia.com/10/196/978176.html վերցված է 29.01.2018թ.

8.http://www.ohchr.org/Documents/Publications/HR_in_armed_conflict_RU.pdf, վերցված է 30.01.2018թ.

9.ՆՁՊ 8-րդ դասարան«Միջազգային մարդասիրական իրավունք»

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Նախնական զինվորական պատրաստություն	
Դասարան՝**9-** րդ	Ուստարի **2022-2023**
Բաժին	Կանոնադրություն
Թեմա	Զինվորին տրվող խրախուսանքները
Բաժնի նպատակը	Իմանալ զինվորական պատասխանատվության տեսակները, կարգապահական, նյութական , քաղաքացիական , քրեական և վարչական; Զորամասի շրջօրյա վերակարգ: Նշանակությունը կազմը: Վաշտի օրապահի պատասխանատվությունները: Օրապահի պարտականություններիկատարման տեղի կահավորումը:
Դասի նպատակը	• Սովորողներին գիտելիքներ տալ զինվորական կարգապահություն էության , նրա նշանակության մասին • Բացատրել զինվորական ծառայությունություններին տրվող խրախուսանքների կարգի մասին • Ցույց տալ կարգապահական տույժեր դաստիարակչական նշանակությունը:
Արժեվորում	ԼԵԶՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ
Վերջնարդյունքներ	Զինվորական կարգապահության էությունը, նրա նշանակությունը և անհրաժեշտությունը զինծառայության ընթացքում, Գիտակցի զինվորական կարգապահության դերը ստորաբաժանումների համախմբման և մարտական հնարավորությունների բազմապատկման գործում: Իմանա խրախուսանքների և կարգապահական տուժերի մասին
Ընդհանրական խաչվող հասկացությունները:	• Կանոնակադրություն, **կանոնադրական նորմ, Իրավունքներ և պարտականություններ**

Միջառարկայական կապերը:	**Ինֆորմատիկա:** Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային Power Point ծրագրով ներկայացնել: **Հայոց լեզու:** Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ: **Հայոց պատմություն**, հոգեբանական ներգործության ձևերին ու մեթոդներին:
Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ:	Դասագիրք,մարտակ կանոնադրություն, Աղվանական պատերազմի վերլուծության ձեռնարկ
Ուսուցման մեթոդներ:	Մտքերի տարափ, հարցադրումներ, զրույցի, ֆիլմից դրվագների ցուցադրում :
Գործողություններ և առաջադրանքներ	– Ներկայացված թեմաի ուսումնասիրություն և վերլուծություն:
Անցկացման վայրը	ՆԶՊ դասարան
Գնահատում	Իրականացվում է ձևավորող գնահատում ինքնագնահատում ,միավորային գնահատում:

Դասի ընթացքը

- Աշակերտների հաշվառում՝ 2 րոպե
- Նախորդ նյութի ամփոփում հարցերի միջոցով՝ 10րոպե
- Նորնյութի հաղորդում և ամրապնդում 20 րոպե

1.Ինչ՞ դեր դեր կարող է խաղալ խրախուսանքը զինծառայողի բարոյահոգեբանական վիճակի բարելավման և մարտական ոգու բարձրացման գործում:

2.թվարկիր զինվորին տրվող խրախուանքի տեսակները

3.Ի՞նչ միջոցներ են նախատեսված սերժանտական կազմի զինծառայողների համար:

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Դիտումներ, դիտարկումներ	Ռազմավարություն և մարտավարություն Ուղղակի և անուղղակի գործողություններ